

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Ուսուցչի օրվա առթիվ, 05.10.2015



Մի րեւի ուսուցիչներ:

Ամենայն սիրով ու խորին հարգանքով շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ:

Մի րեւիներս, թույլ տվեք, օգտվելով ընձեռված առիթից, նշել Ձեր հանդեպ մեր ժողովրդի ունեցած երախտագիտության ու սիրո մասին և հավելել, որ բոլորը սիրով են սպասում այս շատ ցանկալի, համաժողովրդական տոնին՝ բարձրաձայնելու գնահատումի և խոնարհումի խոսքեր, որոնց Դուք իրապես արժանի եք՝ աշակերտների նկատմամբ Ձեր հոգածությամբ, նրանց հանդեպ տաժած ծնողական սիրո Ձեր դրսևորմամբ:

Հարգելիներս, անառարկելի ճշմարտություն է, որ ամուր պետականություն ունենալու համար պետք է ունենալ լավ հասարակություն, իսկ լավ հասարակություն ունենալու համար հարկ է ունենալ հզոր կրթական համակարգ և նվիրյալ մանկավարժներ: Իսկ Դուք բոլոր ժամանակներում եղել եք ոչ միայն մանկավարժական գործի նվիրյալներ, այլև հույսի ու լույսի սերմնացաններ, քանզի Ձեր հոգածությամբ են կրթվում ու դաստիարակվում մեր զավակները: Դուք եք նրանց հոգիներում սերմանում վեհ գաղափարներ, նրանց մոտ ձևավորում ազգային և համամարդկային արժեհամակարգ: Եվ հանդերձ այդ ամենով՝ գորավիզ դառնում մեր մարզի զարգացման գործին, որպեսզի այն համահունչ լինի պետության զորացման ու հզորացման գործընթացին:

Իրավ անուրանալի է Ձեր ներդրումը հասարակության զարգացման գործընթացում և նվիրումն՝ անսահման, ջանքերն՝ անկշռելի: Ի տրիտուր այդ ամենի՝ Դուք արժանանում եք Ձեր սաների անսպառ սիրուն և հասարակության երախտագետ վերաբերմունքին:

Թանկագին ուսուցիչներ, կրկին շնորհավորում եմ Ձեր տոնը, մաղթում եմ ամուր առողջություն, հաջողություններ ու նոր ձեռքբերումներ, խաղաղ աշխատանքային առօրյա:

Ձեզ՝ գնահատումի ու մեծարանքի խոսքեր, հարգանքի ու խոնարհումի դրսևորումներ: